

«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի
իրականացման գրասենյակ»
համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Երևանի №71 մանկապարտեզի շենքի
սեյսմազինվածության բարձրացում և
հիմնանորոգում

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ

Կատարող՝

Տնօրեն՝

«Քոնսեկորդ» ՍՊԸ

Վ.Թևոյան



Երևան - 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	4
1.1.	Տեղեկատվություն ձեռնարկողի մասին	4
1.2.	Նախատեսվող գործունեության անվանումը եւ նպատակը	4
2.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ և ԻՐԱԴՐԱՅԻՆ ՍԽԵՄԱՆՏ	
2.1.	Տարածքի երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները	5
2.2.	Կլիմայական պայմանները	6
2.3.	Մթնոլորտային օդ	7
2.4.	Ջրային ռեսուրսներ	9
2.5.	Հողային ռեսուրսներ	9
2.6.	Կենսաբազմազանություն	10
	2.6.1 Բուսական աշխարհ	10
	2.6.2. Կենդանական աշխարհ	11
2.7.	Սոցիալ տնտեսական պայմանները	12
3.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՋՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ և ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ)	16
3.1.	Գոյություն ունեցող իրավիճակը	16
3.2.	Հիմնանորոգման տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները	17
	3.2.1. Սեյսմազինվածության ավելացում	17
	3.2.2. Ճարտարապետական հիմնական լուծումներ	18
	3.2.3. Էներգաարդյունավետության բարձրացում	20
գ.	Շինարարական աշխատանքների կազմակերպում	22
3.3.	Նյութերի և բնառեսուրսների օգտագործում	23
4.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	23
4.1.	. Ռիսկերի գնահատում	23
	4.1.1. Օդի աղտոտում	24
	4.1.2. Աղմուկի ազդեցություն	24
	4.1.3. Զրոգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն	24
	4.1.4. Հողածածկ	25
	4.1.5. Կենսաբազմազանություն	26
4.2.	Բնապահպանական միջոցառումներ	26

4.2.1. Մթնոլորտային օդ _____	26
4.2.2. Զրային ռեսուրսներ _____	27
4.2.3. Հողային ռեսուրսներ _____	27
4.2.4. Աղմուկ _____	28
4.2.5. Կենսաբազմազանություն _____	28
4.2.6. Սոցիալական մեղմող միջոցառումներ _____	29
4.2.7. Թափոնների կառավարում _____	29
4.2.8. Աշխատանքի անվտանգություն և առողջություն _____	29
4.3. Փոխհատուցում _____	30
5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ _____	31
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆՐԻ/ ՊԼԱՆ _____	32
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ _____	35

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1.1. Տեղեկատվություն ձեռնարկողի մասին

Սույն նախաձեռնության ձեռնարկող է հանդիսանում Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (ԵԿՆ ԾԻԳ ՀՈԱԿ):

Կազմակերպությունը հիմնվել է ըստ Երևանի քաղաքապետի 17.04.2018թ. №1429-Ա որոշման: Կազմակերպության գործառույթները ներառում են Երևան քաղաքի զարգացման համար նախատեսված տարբեր ներդրումային ծրագրերի և նախագծերի համակարգումն ու իրագործումը:

Կազմակերպության գտնվելու վայրը՝ Երևան-0015, Արգիշտիի փող. 1:

1.2. Նախատեսվող գործունեության անվանումը եւ նպատակը

Ներկայացվող գործունեության անվանումն է՝ «Երևանի №71 մանկապարտեզի շենքի սեյսմազինվածության բարձրացում և հիմնանորոգում»:

Մանկապարտեզը նախագծվել ու կառուցվել է մինչև Սպիտակի 1988թ. երկրաշարժը, ուստի ակնհայտ է, որ նրա ծավալահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներում կան անհամապատասխանություններ ՀՀ ներկայումս գործող «ՀՀ ՇՆ 20.04-2020 Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» շինարարական նորմերի պահանջներին:

Համաձայն ՀՀ կառավարության 25.12.2014թ. թիվ 1504-Ն որոշման (Լոտ 4) «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ՄԱԶԾ-ԿԿՀ ծրագիրը պայմանագիր է կնքել ՀԳՇՆ ՍՊԸ-ի հետ, ըստ որի ընկերությունը մշակել է Երևան քաղաքի Նոր Արեշ 2 փողոցի 45ա հասցեում թիվ 71 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների նախագիծը:

Նախագիծը մշակվել է ըստ Երևանի քաղաքապետի կողմից 2018 թվականի մայիսի 18-ին տվրած №01/18-07/2-36359-278 նախագծային առաջադրանքի /ճարտարապետահատակագծային առաջադրանք/ պահանջների: Կառուցապատող է հանդիսանում Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակը և Երևանի թիվ 71 մանկապարտեզ ՊՈԱԿ-ը:

Մանկապարտեզի հողատարածքը՝ 0.62528 հա մակերեսով, գրանցված է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման 22.05.2002թ. տրված թիվ 671270 վկայականում /կցվում է/:

Տարածքի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ անհատույց օգտագործում:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ և ԻՐԱԴՐԱՅԻՆ ՍԽԵՄԱՆ

2.1. Տարածքի երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Երևան քաղաքի Նոր Արեշ վարչական շրջանում: Տարածքը կառուցապատված է տարբեր շինություններով և բնակելի տներով:

Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը հանդիսանում է Արարատյան կուտակային դաշտի հյուսիս-հյուսիսարևելյան եզրամասը: Ռելիեֆը հարթ է, անկումը դեպի հարավ-հարավարևելք: Բուն տարածքի բացարձակ նիշերը տատանվում են՝ 959-961 մետրի սահմաններում:

Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են հիմնականում չորրորդական ժամանակի այլուվիալ-պրոլյուվիալ առաջացումները, որոնք բավական հզոր կուտակումներ ունեն այս տարածքում:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքում գրունտային ջրերը գտնվում են բավական խորը: Բուն տարածքում նրանք գտնվում են 10 մետրից խորը, բայց հորատման ընթացքում թիվ 3 հորատանցքում հանդիպել է գրունտային ջուր՝ 6.0 մետրի վրա և հաստատվել 5.35 մետրի վրա: Մնացած երեք հորատանցքերում գրունտային ջուր չի հանդիպել:

Էկզոգեն երկրաբանական երևույթներից այստեղ առկա են՝ մակերեսային էրոզիա և ջրողողում մթնոլորտային տեղումներից, ինչպես նաև տեխնածին պրոցեսներ կապված կառուցապատումների և մարդու գործունեության հետ:

ՀՀ տարածքի սեյսմիկ գոտևորման քարտեզի համաձայն Երևան քաղաքը գտնվում է II գոտում, ունի 0.4g արագացում և 9 բալ սեյսմիկություն:

Տարածքը բարենպաստ է շինարարական աշխատանքների համար, որոշ դժվարություն կարող են առաջացնել՝ կառուցապատվածությունը և բանուկ տրանսպորտային շարժը:

2.2. Կլիմայական պայմանները

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Ուսումնասիրվող տարածքին բնորոշ է շոգ և չոր ամառը՝ հուլիսի միջին ամսական ջերմաստիճանը $24-25^{\circ}\text{C}$, միջին տարեկան հարաբերական խոնավությունը 61% (ժ.15-ին), լեռնահովտային քամիները 2-3 մ/վրկ արագությամբ և ցուրտ անհողմային ձմեռը՝ հունվարի միջին ամսական ջերմաստիճանը $-2,9^{\circ}\text{C}$ է, հարաբերական խոնավությունը 77% (ժ.15-ին), թույլ քամիները 2-3մ/վրկ արագությամբ:

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Առանց սառնամանիքների ժամանակաշրջանը կազմում է 213 օր, առանձին տարիներին տատանվելով 163-ից մինչև 234 օր: Օդի միջին ջերմաստիճանն ըստ բարձրության տատանվում է $11.5-12^{\circ}\text{C}$: Բացառձակ նվազագույն ջերմաստիճանը դիտվել է հունվարին՝ մինուս 30°C , բացառձակ առավելագույնը՝ հուլիս-օգոստոս ամիսներին՝ $+42^{\circ}\text{C}$:

Տարածքի համար բնորոշ քամու ուղղությունը հյուսիս-արևելյան է: Ձմռան ամիսներին հաճախակի դիտվում են հանդարտ և թույլ քամիներով եղանակներ, ինչը ռելիեֆի գոգավորության պայմաններում նպաստում է սառը օդի լճացմանը: Հունվար ամսին հանդարտ օրերի թիվը կարող է կազմել 45% – 75%: Միջին տարեկան հարաբերական խոնավությունը 61% , հունվարի միջին ամսական ջերմաստիճանը $-2,9^{\circ}\text{C}$ է, հարաբերական խոնավությունը 77%, դիտվում են թույլ քամիներ 2-3մ/վրկ արագությամբ: Քամու առավելագույն արագությունը 25 տարվա ընթացքում 25մ/վ է, 50 տարվա ընթացքում 27մ/վ: Ձյան նորմատիվային ճնշումը՝ 70կգ/մ^2 է: Գրունտի սառչման առավելագույն խորությունը՝ 60 սմ է:

Ստորև աղյուսակի տեսքով բերվում է մի քանի կլիմայական տվյալներ:

Աղյուսակ 2.1. Օդի ջերմաստիճանը, °C

Բնակավայրի անվանումը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի միջին ամսական, ըստ ամիսների °C												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Երևան	1113	-2.9	-0.8	5.1	11.8	16.3	20.8	24.5	24.2	19.9	13.1	6.4	0.1	11.5	-21	41

Աղյուսակ 2.2. Օդի խոնավությունը (%)

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան	միջինը ժամը 15-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		ամենա-ցուրտ ամսվա	Ամենաշոգ ամսվա
Երևան	77	73	61	57	59	53	49	50	51	60	70	76	61	69	35

Աղյուսակ 2.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական մմ												Ձյան ծածկույթը			
	օրական առավելագույնը												տարեկան	տասնօրյա առավելագույնը, սմ	օրերի թիվը	ջրի առավելագույն քանակը ձյան մեջ, մմ
	Ըստ ամիսների															
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				
Երևան	28	31	38	48	55	29	16	8	11	31	30	28	353	50	53	152
	22	28	26	34	47	47	34	22	47	34	30	26	47			

Քամու արագությունը 25 տարվա ընթացքում 25մ/վ է, 50 տարվա ընթացքում 27մ/վ: Ձյան նորմատիվային ճնշումը՝ 70կգու/մ² է:

2.3. Մթնոլորտային օդ

Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ (Էկոմոնիթորինգ) կողմից:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են հիբրիդային դիտացանցի միջոցով:

Այն բաղկացած է 16 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման և ավտոմատ դիտարկումների դիտակայանից, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 211 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետից, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ: ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի, փոշու և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշման:

Ըստ Էկոմոնիթորինգի 2018 թվականի տեղեկագրի Երևան քաղաքի N°1, N°2, N°7, N°8, N°18 դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով կատարվել են մթնոլորտային օդի դիտարկումներ: Վերցվել է օդի 6975 փորձանմուշ, որոնցում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Փոշու որոշ փորձանմուշներում որոշվել են մետաղների պարունակությունը, որոնց ամսական և տարեկան միջին կոնցենտրացիաները բերված են գրաֆիկների տեսքով: 2019թ. քաղաքի մթնոլորտի աղտոտվածությունը (ըստ մթնոլորտն աղտոտող 4 նյութերի) միջինից ցածր մակարդակի է՝ մթնոլորտի աղտոտվածության ցուցանիշը (ՄԱՑ) 1.54 է (փոշի՝ 0.85, ծծմբի երկօքսիդ՝ 0.35, ազոտի երկօքսիդ՝ 0.28, գետնամերձ օզոն՝ 0.06): Վերջին 5 տարիների ընթացքում դիտվել է ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի կոնցենտրացիաների նվազման, իսկ փոշու՝ աճման տենդենց (աղյուսակ 3.1.2): Պասիվ նմուշառիչներով մթնոլորտային օդի դիտարկումներ կատարվել են քաղաքի 42 դիտակետերում, վերցվել է օդի 4098 փորձանմուշ: Երևան քաղաքի մթնոլորտում նյութերի տարեկան միջին կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Աղյուսակ 2.4. Երևան քաղաքի մթնոլորտային աղտոտվածության ցուցանիշները

Որոշվող միացություն	Դիտարկված առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ ³	Միջին տարեկան կոնցենտրացիա, մգ/մ	ՍԹԿ միջին օրական, մգ/մ ³
Ծծմբի երկօքսիդ	015	0.017	0.05
Ազոտի երկօքսիդ	0.081	0.015	0.04
Փոշի	0.869	0.127	0.15
Գետնամերձ օզոն	0.029	0.005	0.03

2.4. Ջրային ռեսուրսներ

ՀՀ-ում մակերևույթային ջրերի որակի մշտադիտարկում նույնպես իրականացնում է Էկոմոնիթորինգի կողմից:

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքը տեղակայված է Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքում:

Ըստ Էկոմոնիթորինգի 2019 թվականի տեղեկագրի Հրազդան գետի վերին հատվածի ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս): Գետաբերանի հատվածներում /Երևանից ներքև/ ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս): Գետառ գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է՝ (5-րդ դաս): Վատ որակը պայմանավորված է լուծված թթվածնի, ԹԿՊ₅, ամոնիում իոնի, ֆոսֆատ իոնի, մանգանի, վանադիումի, ընդհանուր ֆոսֆորի բարձր պարունակությամբ:

Տարածքի հեռավորությունը Հրազդան գետի մոտակա հատվածից ուղիղ գծով կազմում է 1.9 կմ:

2.5. Հողային ռեսուրսներ

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով լանդշաֆտային գոտում: Երևանի հողերը տիպիկ գորշ, կիսաանապատային են՝ սննդանյութերով աղքատ, հարուստ կարբոնատներով: Այս տիպի հողերը սակավազոր են, ունեն կավավազային կազմ, աչքի են ընկնում կմախքային զանգվածների մեծ պարունակությամբ և քարքարոտությամբ, որի հետևանքով էլ բույսերի աճն ու զարգացումը ընթանում է զգալի դժվարություններով:

Տարածաշրջանում հանդիպում են հողաձածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն, խճաքարային, տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- Կիսաանապատային գորշ, խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

Ներկայացվող տարածքում տարածված են կիսաանապատային գորշ, խճաքարային տեղ-տեղ կարբոնատային հողերը, որտեղ բուսածածկը և հողաձածկը համատարած բնույթ չեն կրում: Բուսաշերտը դիտարկվող տարածքում առկա է մի քանի շինություններից ազատ տեղամասերում: Բուսաշերտի հզորությունը տատանվում է 10 – 20 սմ:

Հողային աշխատանքների ժամանակ, գրունտի մշակման աշխատանքներից առաջացող հողային հանույթը և բնահողը կուտակվելու են կազմակերպված շինարարական հրապարակի տարածքում, որոնք հետագայում նախատեսվում են օգտագործել: Հեռացված գրունտի մեծ մասն օգտագործվելու է հետլիցքի նպատակով, իսկ բուսահողը՝ բնակելի թաղամասի բարեկարգման և կանաչապատման աշխատանքներում:

Համաձայն Երևանի գլխավոր հատակագծի քաղաքի տարածքը աղտոտված է ծանր մետաղներով և մասամբ՝ ռադիոնուկլիդներով: Ըստ ծանր մետաղներով աղտոտվածության քաղաքի տարածքը ներկայումս վերագրվում է միջին աղտոտվածության տարածքներին: Սակայն քաղաքի տարածքում առանձնանում են նաև ուժեղ աղտոտված տարածքներ: Պետք է նշել, որ դիտարկվող տարածքը աղտոտված չէ:

Անմիջապես մանկապարտեզի տարածքի մեծ մասը կառուցապատված է, սալապատ և ասֆալտապատ: Բուսահող մուգ մոխրագույն, դեղնավուն երանգով, մանրախճի պարունակությամբ, ավազակավային կազմի, առկա է մանկապարտեզի մի քանի հատվածներում առկա սիզամարգերում:

2.6. Կենսաբազմազանություն

Տարածքը գտնվում է Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի խառը կառուցապատման գոտում, ուր բացակայում են բնական լանդշաֆտները:

Ստորև բերված է Երևանի տարածաշրջանի ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն:

2.6.1 Բուսական աշխարհ

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երևանյան գոգավորությունը տեղաբաշխված ծովի մակերևույթից 860-1390մ բարձրությունների սահմաններում: Երևանյան գոգավորությունում առկա են հարթավայրային լանդշաֆտային և լավային սարավանդներ, որոնք բաղկացած են կիսաանապատային և նախալեռնային գոտիներից: Երևանի դիտարկվող տարածքում, որտեղ իրականացվելու է նախատեսվող գործունեությունը գերիշխում են լավային սարավանդները, իսկ հարավային լանդշաֆտները՝ Հրազդան և Գետառ գետերի սելավաբերուկ հողատարածքներն են: Երևան քաղաքը գտնվելով ջրագուրկ կիսաանապատային գոտում ընդերքում ունի հարուստ ջրատար շերտեր՝ խորքային ջրեր:

Երևան քաղաքի տերիտորիան Անդրկովկասի ամենաչորային շրջաններից մեկն է, կլիման այստեղ խիստ ցամաքային է, կիսաանապատային: Երևանում ցածր է նաև օդի հարաբերական խոնավությունը, որը ամռան ամիսներին իջնում է մինչև 40%-ի: Երևանում հաճախակի նկատվում է կարճ գարուն, որը բացասական ազդեցություն է ունենում ինչպես բուսական, այնպես էլ կենդանական աշխարհի ներկայացուցիչների վրա:

Երևանի հողերը տիպիկ գորշ կիսաանապատային են, աղքատ աննդանյութերով, հարուստ կարբոնատներով, սակավազոր, կավավազային, կմախքային զանգվածների մեծ պարունակությամբ, շերտաթեփուկավոր կամ փոշեհատիկային կազմությամբ,

քարքարոտությամբ, որի հետևանքով էլ բույսերի աճն ու զարգացումը ընթանում է զգալի դժվարություններով: Հազարամյակների ընթացքում արհեստական ոռոգման տարբեր տեսակի ագրոմիջոցառումների պարագայում Երևանի տարածաշրջանում առաջացել են կուլտուր-ոռոգելի զգալի հողատարածքներ, որոնք վերածվել են տարբեր տիպի փարթամ կուլտուրական լանդշաֆտների:

Երևանի ֆլորիստիկ շրջանի բուսականությունը օշինդրա-կիսաանապատային է վաղանցիկ կամ էֆեմերային բուսատեսաների գերակշռությամբ: Երևանյան լանդշաֆտի ամենաբնորոշ առանձնահատկությունն այն է, որ այստեղ բնականորեն չեն աճում ծառաբույսեր, բացառությամբ մի քանի կիսաթփերի: Հետևաբար, Երևանում ծառերն ու թփերը կարելի է աճեցնել միայն ոռոգման առկայությամբ:

Երևանյան լանդշաֆտում հանդիպում են բուսական համակեցությունների հետևյալ 2 ենթատիպերը՝ 1. Ֆրիգանա (ժայռային բուսականություն), 2. Տոմիլյար (անապատային): Տարածքներին բնորոշ են հիմնականում կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարբերակները, օշինդրա-էֆեմերային և հալոֆիլ, պսամոֆիլ անապատային բուսատեսակներով:

Անմիջապես մանկապարտեզի տարածքի մի քանի մասերում կան կանաչ գոտիներ, սիզամարգով, որոնց վրա առկա են 25 – 30 ծառ և թփեր, հիմնականում՝ ծիրանիներ, թղկիներ, թթենի և այլն:

2.6.2. Կենդանական աշխարհ

Երևանի տարածաշրջանում կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով: Բնական լանդշաֆտների ֆաունան բազմազան է, այստեղ հանդիպում են՝ կաթնասունների շուրջ 20 տեսակ:

Համայնքի տարածքում տարածված են նաև կաթնասունների ֆաունայի ոչ ցանկալի ներկայացուցիչներ, մասնավորապես՝ սև և մոխրաույն առնետները, տնային մուկը: Թռչուններից հանդիպում են շուրջ 100 տեսակ, որոնց մեծ մասը բնադրում են: Սողուններից հանդիպում են շուրջ 20 տեսակ, երկկենցաղներից հայտնի է 4 տեսակ: Երկկենցաղներից հանդիպում է լճային գորտը, սիրիական սխտորագորտը, կանաչ դողոշը, մողեսներից՝ կլորագլխիկը, օձագլխիկը և երկարատ սցինկը, օձերից՝ կույր օձուկը, ոնգեղջյուր օձը: Բազմազան են թռչունները և միջատները: Թիթեռներից բնորոշ են սաստիրները, խոշոր առագաստաթիթեռները:

Բնական լանդշաֆտներում բազմաթիվ են անողնաշարավոր կենդանիները: Առավել ուսումնասիրված են բզեզները, հայտնի է մոտ 500 տեսակ: Այլ միջատներից հայտնի են շուրջ 60 երկթև, 40 թաղանթաթևավոր, 130 թիթեռներ, 10-ից 20 տեսակ

ուղղաթևեր, սարդեր, փափկամարմիններ, մոտ 30 տեսակ վահանակրեր և տզեր: Հրազդան գետում հանդիպում են ձկների 7 տեսակ:

Պետք է փաստել, որ դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում վայրի կենդանատեսակներ չեն կարող լինել:

Ուսումնասիրվող տարածքը չի առնչվում նաև բնության հատուկ պահպանվող տարածքների, բնության և մշակութային հուշարձանների, կամ կենսաբազմազանության վտանգված տեսակների հետ:

2.7. Սոցիալ տնտեսական պայմանները

Ներկայացվող տարածքը գտնվում է Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանում:

Ստորև բերված են Երևան քաղաքի որոշ սոցիալ-տնտեսական ցուցանիշներ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքից¹:

Աղյուսակ 2.5. Երևանի ընդհանուր ցուցանիշները

N	Տարածքը	223 քառ. կմ
1	ՀՀ տարածքում քաղաքի տարածքի տեսակարար կշիռը	0.7 %
2	Գյուղատնտեսական նշանակության հողեր	3 351.2 հա
3	այդ թվում՝ վարելահողեր	915.6 հա
4	Վարչական շրջաններ	12
5	Բնակչության թվաքանակը 2019թ. դրությամբ	1081.8 հազ. մարդ
6	ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում Երևան քաղաքի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2015թ.	36.8 %

Մայրաքաղաք Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում: Սահմանակից է ՀՀ Արագածոտնի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերին:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ):

¹ www.armstat.am

Երևանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է: Այն խոշորագույնն է ոչ միայն ՀՀ ներկա 49 քաղաքների, այլև պատմական Հայաստանի մայրաքաղաքների շարքում:

Մայրաքաղաքում են գտնվում ՀՀ Ազգային ժողովն ու ՀՀ կառավարությունը, ՀՀ բոլոր նախարարություններն ու հիմնական գերատեսչությունները, հասարակական և այլ կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների, հանձնաժողովների, դատաիրավական մարմինների, դրամատների ու սակարանների (բորսաների) ճնշող մեծամասնությունը, զանգվածային լրատվամիջոցների մեծ մասը:

Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային (միջկառավարական, միջպետական) և այլ կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Բազմաճյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է:

Մայրաքաղաքի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

Աղյուսակ 2.6. Երևանի տնտեսության համամասնական տվյալները

✓ արդյունաբերություն`	38%,
✓ գյուղատնտեսություն	1.3
✓ շինարարություն`	52.3
✓ մանրածախ	72.8
✓ ծառայություններ`	81.7

Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:


Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է անասնաբուծությունում և բուսաբուծությունում:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են ամբողջ հանրապետության կապն արտաքին աշխարհի հետ):

Էրեբունի վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի Կենտրոն, Նորք-Մարաշ, Նոր Նորք, Շենգավիթ և Նուբարաշեն վարչական շրջանների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Կոտայքի և Արարատի մարզերին:

Տարածքը` 4850 հա

Բնակչությունը` 126 300 մարդ



Նկար 1. Տեղանքի իրադրային սխեմա

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՂԵԽԱԿՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Մ 1:500

N	ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ
1	ՄԱՆԿԱՊԱՐՏԵՋ - Ի ՇԵՆՔ N71	ԿԵՐԱՆՈՐԳՎՈՐ
2	ԵՆԹԱՎԱՅԱՆ	ԱՌԿԱ

Ժամանակավոր տնտեսության ժամանակավոր շենքերի և շինությունների ցուցակ

Դ/Բ	Անվանումը	Քանակը	Չափերը, մ	Ծախսվող էներգ. կետ	Ծանոթություն
1	Աշխերի գրասենյակ	1	8.6x3.1	6.0	կոնտեյներային
2	Գործիքների պահեստ	1	6.7x3.0	6.0	կոնտեյներային
3	Կիսածածկ պահեստ	1	10.0x5.0	—	—
4	Մեկ տեղանոց բրդուգարան հարկ եղած դեպքում	1	D1.3մ	—	—

ՊԵՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- ԱՌԿԱ ԿԵՐԱՆՈՐԳՎՈՐ ԱՄԱԿԱՊԱՐՏԵՋԻ ԱՄԱՆԱՇԵՆ ԵՎ ԱՆՅՈՒՄՆԵՐ
- ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- ԱՌԿԱ ԽՍԵՆՈՒ ԶՐԱԳԻԾ
- ԱՌԿԱ ԳԱԶԻ ԳԻԾ
- ԱՌԿԱ ԿՈՅՈՒՂԱԳԻԾ
- ԱՌԿԱ ԱՄՖԱՆՏԵՑՄՈՆ ՃԱՆԱՊԱՐՆԵՐ
- ԱՌԿԱ ԲՈՐԶՐ ԼԱՐԱՆ ՀԱՐՈՐՂԱԳԻԾ (ստորգետնյա)
- ԱՌԿԱ ՍԱԾՐ ԼԱՐԱՆ ԷԼԵԿՏՐՎԱԿԱՆ ԳԻԾ (նալուխային)
- ԺՄՆԱԿԱԿՈՐ ՑԱՆԿՊԱՆ
- ԺՄՆԱԿԱԿՈՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- ԶԵՐԱՆԱՐՈՒՄ ԱՆԽԱՏԵՎՈՐ ՑԱՆԿՊԱՆ
- ԱՌԿԱ ԿԱՆԱՉՊԱՄՔԱՑ ՏԱՐԱԾՔ
- ԱՌԿԱ ԿԱՐԻ ՀԱՐՈՐՂԱԳԻԾ
- ԱՌԿԱ ՑԱՆԿՊԱՆ

Ծանոթություն:

- Շինարարական հրապարակը ունի շատ սահմանափակ տարածք: Ուստի ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների ցանկը առաջարկվում է հասցնել նվազագույնի:
- Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների ցանկը կընտրվի շինարարության ընթացքում:
- Շինարարական հրապարակը ցանկապատվում է ժամանակավոր ցանկապատով:



ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՆՏԱՑՄԱՆՔՆԵՐ ԱՎԱՌՈՒՑ ԱՌԿԱՐԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՐԱԿԻՆԵՆ ՏՎՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԿ

ա) Է. ԱՄՏԱԿԱՊԱՐՄԱՆ ԱՄԱՆԱԳԵՏՆԵՐԻ ԱՏՐՈԳԵՏԵԱ ԱՄՈՒՆԻՆԵՐԻ ՏԵՐԱՐԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԱԿԱԳՇՈՒՄ ԵՎ ԽՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՇՏԵՆՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ
 բ) ԿԱՐԻ ԱՄԱՆԱԳԵՏՆԵՐԻ ԱՏՐՈԳԵՏԵԱ ԱՄՈՒՆԻՆԵՐԻ ՏԵՐԱՐԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԱԿԱԳՇՈՒՄ ԵՎ ԽՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՇՏԵՆՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ
 գ) «ՀԱՅՅՐԱՌՈՒԿԱԹՈՒՐԻ» ՓԲԸ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՄԱՆԱԳԵՏՆԵՐԻ ԶՐԱՄԱՏԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԿՈՅՈՒՐՈՒ ԽՈՐՈՒՎԱԿԱՆԱՐԵՐԻ ՏԵՐԱՐԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԱԿԱԳՇՈՒՄ ԵՎ ԽՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՇՏԵՆՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

Պատկեր	UNDP / ARM10 / RFP095 / 18 - L - 4	ԳԳ
Պատկեր	UNDP / ARM10 / RFP095 / 18 - L - 4	ԳԳ
ՆԳԹ	ԼՆՈՒՑԱՆՅԱՆ	
ԲԱԾԻՒ ՊԵՏ	ԼՆՈՒՑԱՆՅԱՆ	
ՂԵԽԱԿԱՆ	ԼՈՒՐՊԱՆ	
	ԳԼԽԱԿՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ	ՓՈՒԼ
	ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՂԵԽԱԿՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ1:500	ԹԵՐՔ
		ԹԵՐՔԵՐ
		Ա
		ԵԿԸ-1
		6

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ և ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ)

3.1. Գոյություն ունեցող իրավիճակը

Երևանի №71 մանկապարտեզը գտնվում է Երևան քաղաքի Նոր Արեշ 2 փողոցի 45ա հասցեում: Մանկապարտեզը կազմված է թվով 7 մասնաշենքերից, որոնք կապված են միմյանց հետ 3 տաքանցումներով:

Բոլոր մասնաշենքերն երկու հարկանի են, 3.30մ հարկի բարձրությամբ, բացառությամբ 2-րդ և լողավազանի մասնաշենքերի, որոնք մեկ հարկանի են և ունեն համապատասխանաբար 3.30 և 3.60 հարկի բարձրություն: Բոլոր մասնաշենքերը ինչպես միմյանցից, այնպես էլ տաքանցումներից բաժանված են հակասեյսմիկ կարաններով:

Մանկապարտեզը կառուցվել է 1980-ական թվականներին, տեղադրված է մեղմ թեքությամբ տեղանքում, մասնաշենքերի համապատասխան հարկերի հատակների նիշերը գտնվում են նույն մակարդակում:

Մանկապարտեզի ուսումնասիրությունը արձանագրել է հետևյալ խնդիրները.

- մանկապարտեզի հիմնական շինությունների ծավալահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներում կան անհամապատասխանություններ ՀՀ ներկայումս գործող «ՀՀ ՇՆ 20.04-2020 Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» շինարարական նորմերի պահանջներին,

- շենքի կոյուղու և ջրագծերի ներքին ցանցերը գտնվում են անբավարար և մասամբ վթարային վիճակում, ինչի հետևանքով պարբերաբար տեղի է ունենում ջրերի արտահոսք դեպի նկուղային հարկ,

- ինչպես հիմքերը, այնպես էլ պատերի գետնախարսխային մասերը չունեն ջրամեկուսիչ շերտ, ինչի հետևանքով գրունտում առկա խոնավությունը ներթափանցում է շենքի կոնստրուկտիվ տարրեր:

- նկուղային հարկը չունի բավարար օդափոխություն կամ այն վատ է կազմակերպված: Էներգետիկ հարցերի ուսումնասիրության արդյունքում պարզվեց՝

- Բազային տարվա կտրվածքով էներգիայի (բնական գազ և էլեկտրաէներգիա), ամենամեծ ծախսը ջեռուցումն է՝ 91 % (7.0 մլն.դրամ, կամ 11,800 եվրո 2018թ. ապրիլ ամսվա սակագներով), երկրորդը, տաք ջրամատակարարումը՝ 5 % (1.2

մլն.դրամ, կամ 2,050 եվրո), հաջորդը խոհանոցային և այլ սարքավորումները՝ 3% (0.7 մլն.դրամ, կամ 1,250 եվրո) և լուսավորումը՝ 1 % (0.3 մլն.դրամ, կամ 500եվրո),

- Մանկապարտեզի շենքի բոլոր պատող կոնստրուկցիաները (թրրևս բացի պատուհանների որոշ մասից) չեն բավարարում ՀՀ գործող նորմերին,
- Ջեռուցումը կատարվում է պատի երկկոնտուրանի բնական գազի կաթսաներով,
- Լուսավորումը հիմնականում իրականացվում է շիկացման և լյումինեսցենտային գլանաձև լամպերով,
- Կենցաղային տաք ջրամատակարարումը ջեռուցման ժամանակաշրջանում իրականացվում է արագային էլեկտրական տաքացուցիչներով,
- Ջեռուցման ժամանակաշրջանում ջեռուցման և օդափոխման համար ջերմային էներգիայի բազային տարվա փաստացի տեսակարար ծախսը կազմում է՝ 143 կՎտ.ժ/, իսկ նորմավորվող տեսակարար ծախսը (ըստ էներգետիկ անձնագրի)՝ 381 կՎտ.ժ/, որը զգալի գերազանցում է միջազգային միջին ցուցանիշը,
- Փաստացի ջերմային հարմարավետությունը, նորմավորվածի նկատմամբ կազմում է 38 %,
- Ըստ Շենքերի ջերմային պաշտպանություն ՀՀՇՆ 24-01-2016 ՀՀ շինարարական նորմերի շենքը անհրաժեշտ է ջերմամեկուսացնել

3.2. Հիմնանորոգման տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները

3.2.1. Սեյսմազինվածության ավելացում

Մասնաշենքերի սեյսմազինվածության մակարդակի ավելացման և բնականոն շահագործման համար նախագծով նախատեսված են հետևյալ տեխնիկական լուծումները.

1. Բոլոր մասնաշենքերում նախագծում նշված հիմքերը ուժեղացվում են և միաձույլ երկաթբետոնե հեծաններով կապվում են միմիանց հետ:
2. Նախագծում նշված սյուները ուժեղացվում են և իրականացվում են միաձույլ երկաթբետոնե դիաֆրագմաներ:
3. Բոլոր մասնաշենքերում շրջանակային կոշտ հանգույցներ ստանալու նպատակով ուժեղացվում են սյան և հեծանի՝ միացման հանգույցներ:
4. Մաքրվում են բոլոր լցափակված հակասեյսմիկ կարանները, ուժեղացվում են միացման հանգույցները և լցափակվում են փշովի փրփրաուռեթանով և ցեմենտավազային շաղախով:
5. Բոլոր ծածկերը ուժեղացվում են մանրախիճ ամրանավորված բետոնի ծածկաշերտով:

6. Կոռոզիայի ենթարկված բացված ամրանները մաքրվում են և սվաղվում ցեմենտավազային շաղախով:
7. Աստիճանավանդակների տարածքում տեղադրվում են հակահրդեհային աստիճաններ: Այդ իրականացնելու նպատակով կազմատվում են հավաքովի ծածկի սալերը և փոխարինվում են միաձույլ երկաթբետոնե ծածկերով և մտոցի պատերով:
8. Ապամոնտաժվում են բոլոր միջնորմները և իրականացվում նորերը, որոնք կապվում են կրող կոնստրուկցիաների հետ ճկուն կապերով:
9. Իրականացվում են հարթ տանիքի նոր շերտեր:
10. Իրականացվում են արտաքին պատերի ջերմամեկուսիչ շերտեր:
11. Իրականացվում են նոր հարթակներ, թեքահարթակներ և հովարներ:
12. Տարհանման սանդուղքները ապամոնտաժվում են, ուժեղացվում են և վերատեղադրվում են պատերի ջերմամեկուսացման շերտերը իրականացնելուց հետո:
13. Տեղադրվում են նոր բազրիքներ:
14. Տեղադրվում են օդափոխության սարքեր, ներկառուցված ջերմաօգտահանման մեխանիզմով:
15. Տանիքներում տեղադրվում են արևային ֆոտովոլտային և արևային ջրատաքացուցիչ սարքեր՝ մետաղական հենարանների վրա:

3.2.2. Ճարտարապետական հիմնական լուծումներ

- Ջերմամեկուսացվում են արտաքին պատերը էքստրուդացված պոլիստիրոլի և հանքային բամբկե սալերով, լրացվում են նոր արտաքին պատեր խարամբետոնե բլոկներից 200մմ հաստությամբ
- Կառուցվում են միջնորմներ՝ գիպսաստվարաթղթից մետաղական կարկասով, ձայնամեկուսիչը-կոշտ հանքաբամբակ և 100մմ հաստության խարամբետոնե բլոկներից
- Ձևավորվում են նոր խաղասենյակներ, ննջարաններ, սանհանգույցներ, ընդարձակ ռեկրեացիաներ, նոր աշխատասենյակներ և նոր խոհանոց, լվացքատուն առկա լողավազանի տարածքում
- Վերակառուցվում և կառուցվում են արտաքին աստիճանները, հարթակները և թեքահարթակները: Արտաքին աստիճանները իրականացվում են բազալտե քարերից 300x150մմ, իսկ հարթակները և թեքահարթակները երեսապատվում են 30մմ հաստության բազալտե սալիկներով՝ մետաղական ցանցի վրա:
- Հատակները. առկա ե/բ ծածկի սալի վրա, իրականացվում է բետոնե 60մմ հաստության շերտ, ձայնամեկուսիչ շերտ խարամբետոն B7.5 դասի, 800կգ/մ3,

50մմ հաստության, հարթեցնող շերտ ցեմենտավազային շաղախով 30մմ հաստության: Հատակների ծածկույթները իրականացվում են (մասնաշենքերում ըստ նախագծի՝ կերամոզրանիտե սալիկներ, խեցեսալեր, ՊՎՔ հետերոզեն -2,0 մմ հաստության, պաշտպանիչ շերտը հոմոզեն 0.7մմ հաստության)

- Տեղադրվում են նոր պատուհաններ մետաղապլաստե, ապակեփաթեթով 4x12x4մմ, 4 խցիկով պրոֆիլի լայնությունը 60մմ, մետաղական միջուկի հաստությունը ոչ պակաս 1.2մմ
- Տեղադրվում են նոր ներքին դռներ՝ մետաղապլաստե, 3 խցիկով, պրոֆիլի լայնությունը 60մմ, փայտե կարկասով, 8մմ լամինացված ՄԴՖ-ով երեսապատված:
- Արտաքին դռները իրականացվում են ալյումինե, անոդացված, ապակեփաթեթը երկշերտ, փաթեթի կտրվածքը 4x12x4մմ պրոֆիլը ջերմականըջակով, պրոֆիլի լայնությունը 60մմ, արծաթագույն:
- Ներքին ալյումինե վիտրաժները .ալյումինե, անոդացված, պրոֆիլի լայնությունը 60մմ, արծաթագույն, թրծած, 6մմ հաստության ապակիով:
- Գետնախարիսխը պատվում է բազալտե սալիկներով
- Իրականացվում է նոր հարթ տանիք: Ծածկույթը՝ 1շերտ իզոգամ ավազաշերտով և 2 շերտ իզոգամ
- Տանիքի ջերմամեկուսիչ շերտը 100-250մմ հաստության փրփրապոլիստիրոլ
- Տանիքում կազմակերպվում է անձրևաջրերի ներքին հեռացում
- Պատի և հարթակի հատման սահմանը երեսապատվում է 1 շարք 3սմ հաստության բազալտե սալիկներով, գլխավոր մուտքի աստիճանների եզրերում տեղադրվում են բազալտե գլխադիրներ h=15սմ և տեղադրվում են նոր բազրիքներ ըստ ԿԵ թերթերի
- Իրականացվում են նոր բացվածքներ
- Հիմնանորոգվում են առաստաղները՝ բարձրորակ գաջով քսահարթում, ծեփամածիկի հարթեցնող շերտ, իսկ ցնցուղարաններում և սանհանգույցներում կախովի առաստաղ պլաստիկից՝ մետաղական կարկասի վրա
- Բոլոր ներքին և արտաքին բազրիքները իրականացվում են ըստ ԿԵ թերթերի
- Հիմնանորոգվում են պատերը, խարամաբետոնե բլոկներից միջնորմները ծածկվում են բարձրորակ գաջի սվաղով, իսկ գիպասատվարաթղթից մետաղական կարկասով միջնորմները քսահարթվում են գաջի շաղախով և ներկվում են լատեքսային ներկով
- Սանհանգույցների և ցնցուղարանների պատերի ու միջնորմների ստորին մասը՝ հատակից 1.5մ և 2.7մ բարձրությամբ իրականացվում է ցեմենտավազային սվաղի վրա ջնարակած խեցեսալեր:
- Շենքերի շուրջ իրականացվում է նոր ասֆալտբետոնե սալվածք 1.2-3,0մ լայնքով, բազալտե եզրաքարերով:

- Իրականացվում են արտաքին բարեկարգման աշխատանքներ՝ քայքայված ասֆալտբետոնե ծածկույթի քանդում, սալվածքի քանդում, կառուցում, նոր ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում, բազալտե եզրաքարերի տեղադրում, ձևավոր սալիկներով ծածկի իրականացում:
- Ցանկապատի և դարպասի կառուցումը, խաղահրապարակի, ծաղկանոցի և սիզամարգերի հիմնում, զրուցարանների և նստարանների տեղադրում նախատեսվում է հեռանկարում:

Նախագծով նախատեսվում են ինժեներական նոր համակարգեր.

- Արտաքին և ներքին ջրամատակարարման և կոյուղու համակարգ
- Ջերմամատակարարման համակարգ
- Արտաքին և ներքին էլեկտրամատակարարման համակարգ
- Հակահրդեհային ազդանշանման համակարգ
- Տեսահսկողության համակարգ

3.2.3. Էներգաարդյունավետության բարձրացում

Առաջարկվում է իրականացնել էներգաարդյունավետության բարձրացման հետևյալ միջոցառումները.

- Հարթ տանիքի ջերմամեկուսացում էքստրուդացված փրփրապոլիստիրոլե (XPS, կամ համարժեք այլ նյութով) 100 մմ հաստության ջերմամեկուսիչ սալերով.
- Արտաքին պատերի ջերմամեկուսացում փրփրապոլիուրեթան (PU, կամ համարժեք այլ նյութով) 70 մմ հաստության ջերմամեկուսիչ նյութով
- Պատուհանների տակի խորշերի ներքին մակերևույթին ջերմամեկուսիչ, արտացոլող էկրանների տեղադրում,
- Արտաքին դռների, պատուհանների փոխարինում էներգաարդյունավետ (երկշերտ ապակեպատմամբ, 4 խցիկանի ՊՎՔ շրջանակներով),
- Նկուղների առաստաղների ջերմամեկուսացում 100 մմ հաստության հանքային բամբակով (կամ XPS/EPS համարժեք այլ նյութով), տաքանցումների հատակների ջերմամեկուսացում փրփրապոլիուրեթան (PU, կամ համարժեք այլ նյութով) 90 մմ հաստության ջերմամեկուսիչ նյութով,
- Թվով 6 կոնդենսացիոն ջեռուցման կաթսաների տեղադրում (պատին ամրացվող), որոնց միավորի հզորությունը 55 կՎտ է: Նախկինում տեղադրված թվով 10՝ 32 կՎտ հզորությամբ գազի կաթսաների ապամոնտաժում:
- Ջեռուցման համակարգի ավտոմատ կառավարման և բալանսավորման համակարգի ներդրում, ջերմային ցանցի ջերմամեկուսացում,

- Բոլոր շիկացման, ֆլուրեսցենտային և լյումինիսցենտային լամպերի փոխարինում լուսադիոդային էներգաարդյունավետ լամպերով,
- Տաք ջրամատակարարման իրականացում՝ արևային ջրատաքացուցիչների համակարգի տեղադրում 180 վակուումային խողովակներով (6 հատ թերմոսիֆոնային արևային կոլեկտոր),
- Արևային ֆոտոէլեկտրական 34.5 կՎտ պիկային հզորությամբ (100 հատ 0.345 կՎտ հզորության մոդուլներից բաղկացած) կայանի կառուցում:
- Շենքի պատող կոնստրուկցիաների համար նշված միջոցառումների իրականացման դեպքում մանկապարտեզի ջերմային պաշտպանությունը կհամապատասխանի «Շենքերի ջերմային պաշտպանություն» ՀՀՇՆ 24-01-2016 ՀՀ շինարարական նորմերի պահանջներին:

Միջոցառումների այս փաթեթի իրականացման դեպքում շենքի էներգաարդյունավետությունը կբարձրանա շուրջ 76 %-ով:

Առաջարկվող էներգաարդյունավետության միջոցառումների իրականացման արդյունքում նախադպրոցական ուսումնական հաստատության էներգատարության ցուցանիշները կփոխվեն և կարելի կլինի արձանագրել հետևյալը.

- էլեկտրաէներգիայի տարեկան խնայողությունը կկազմի 86 ՄՎտժ իսկ բնական գազի խնայողությունը՝ շուրջ 430 ՄՎտժ,
- Ջեռուցման համար անհրաժեշտ ջերմային էներգիայի նորմատիվային պահանջարկը կնվազի 4.2 անգամ,
- Ջեռուցման հարմարավետության 100 %-անոց մակարդակ ապահովելու համար կպահանջվի, ներկայիս 38 %-անոց մակարդակ ապահովելու համար ծախսվող էներգիայի նույն քանակության 54 %-ը,
- Մանկապարտեզի շենքի բոլոր պատող կոնստրուկցիաները կբավարարեն ՀՀ գործող նորմերին,
- Ջեռուցման համար կպահանջվի առկա տեղակայված ջերմային հզորության ընդամենը շուրջ 50 %, հետաքար նոր կոնդենսացիոն կաթսայի տեղակայումը կբերի լրացուցիչ խնայողությունների,
- Լուսավորումը կիրականացվի միայն լուսադիոդային լամպերով,
- Կենցաղային տաք ջրամատակարարումը կիրականացվի արևային տաքացուցիչների միջոցով (ձմռանը մասնակիորեն նաև բնական գազով),
- Բազային տարվա կտրվածքով պահանջվող էլեկտրաէներգիայի ավելի քան 90% կարտադրվի սեփական արևային ֆոտովոլտային համակարգի կողմից,
- Ջեռուցման ժամանակաշրջանում ջեռուցման և օդափոխման համար ջերմային էներգիայի նորմավորվող տեսակարար ծախսը (ըստ էներգետիկ անձնագրի)՝

- կկազմի՝ 90 կՎտ.ժ/, որը ցածր է միջազգային միջին ցուցանիշից,
- Ածխածնի երկօքսիդի տարեկան արտանետումը կկրճատվի շուրջ 126 տոննայով:

գ. Շինարարական աշխատանքների կազմակերպում

Երևանի թիվ 71 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները ներառում են.

- Նախապատրաստական փուլի աշխատանքներ
- Հողային աշխատանքներ
- Շինարարական կոնստրուկցիաների ամրացման աշխատանքներ
- Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ
- Պատեր և միջնապատեր
- Տանիքային աշխատանքներ
- Ներքին ինժեներական ցանցեր
- Պատուհանների և դռների փոխարինում
- Զերմամեկուսացում
- Հարդարման աշխատանքներ
- Երեսպատման աշխատանքներ
- Տարածքի բարեկարգման աշխատանքներ:

Ապրանքային բետոնը շին.հրապարակ է բերվում պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից: Ամրացման համար անհրաժեշտ կոնստրուկցիաները պատրաստվում են պատվերով հատուկ պոլիգոններում:

Շինարարական հրապարակում չի նախատեսվում շինանյութերի, կամ սորուն նյութերի մեծածավալ պահեստներ: Նախատեսվում է տեղադրել երեք հատ ժամանակավոր տնակ /տես գլխավոր հատակագիծ/: Շինարարական տեխնիկայի ժամանակավոր կայանումը կլինի մանկապարտեզի ցանկապատի երկայնքով Նոր Արեշի 2-րդ փողոցի վրա:

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրն ու շինարարության ընդհանուր ծավալը: Շինարարության տևողությունը կազմում է 20 ամիս:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վաճակալել դրանք այլ կազմակերպություններից:

Շինարարության ընթացքում բանվորները կսնվեն հատուկ ճաշարան-տնակում:
Աշխատողների թիվը շինարարության տարբեր փուլերում տատանվում է 50-ից մինչև 60:

Շինարարությունը իրականացվելու է հետևյալ հիմնական մեքենա- մեխանիզմներով.

1. Ավտոինքնաթափ՝ 2 հատ
2. Ինքնաթափ ավտոմեքենաներ
3. Ավտոամբարձիչ՝ 1 հատ
4. Էքսկավատոր՝ 1 հատ
5. Բետոնախառնիչ ավտոմեքենա՝ 1 հատ
6. Ավտոբետոնապոմպ
7. Բուլդոզեր՝ 1 հատ

3.3. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Մանկապարտեզի հիմնանորոգման ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, երկաթբետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ, պատրաստի դռներ և պատուհաններ ու այլն: Նյութերի ամբողջական ցանկը ներկայացված է նախագծային փաթեթում:

Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ ջրցանի և աշխատողների կենցաղային կարիքների համար /հաշվարկը տես հաջորդ բաժիններում/:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

4.1 . Ռիսկերի գնահատում

Երևանի թիվ 71 մանկապարտեզի հիմնանորոգման նախատեսվող իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա կդրսևորվեն որոշակի բացասական ազդեցություններ, սակայն հաշվի առնելով աշխատանքների բնույթը և ծավալները, ազդեցությունը չի կարող լինել էական և կկրի ժամանակավոր բնույթ: Ազդեցությունը հիմնականում պայմանավորված կլինի շինարարական աշխատանքներով:

Շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված են արտանետումներով, որոնք կարող են առաջանալ՝

- Գոյություն ունեցող շինարարական կոնստրուկցիաների ամրացման ընթացքում
- Հողային աշխատանքների ընթացքում
- Շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:
- Հողային զանգվածների և շինադրի տեղափոխման հետ կապված,
- Շինարարության ընթացքում մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից մերձակա բնակչությանը պատճառվող անհանգստությամբ
- Շինարարական տեխնիկայի շահագործման ընթացքում աղմուկի մակարդակի ավելացմամբ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

4.1.1. Օդի աղտոտում

Թիվ 71 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների և առկա շինությունների ու կոնստրուկցիաների քանդման ընթացքում կանխատեսվում է օդի աղտոտում՝ պայմանավորված քանդման և հողային աշխատանքների ժամանակ առաջացող անօրգանական փոշու և տեխնիկական միջոցների շահագործման ժամանակ վառելիքի այրման արգասիքների՝ մրի, ծծմբի և ազոտի երկօքսիդների ու ածխածնի օքսիդի արտանետումներով:

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը:

4.1.2. Աղմուկի ազդեցություն

Շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործման, ինչպես նաև շինանյութերի և կոնստրուկցիաների բեռնաթափման ժամանակ կբարձրանա աղմուկի մակարդակը:

4.1.3. Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը օգտագործվելու է ջրցանի և աշխատողների խմելու կենցաղային նպատակների համար: Ջրամատակարարումը իրականացվելու է մանկապարտեզի գոյություն ունեցող ջրամատակարարման համակարգից:

Ջրագծերի և կոյուղու վերանորոգման ընթացքում կկուտակվեն ջրի պաշարներ հատուկ տարողության միջոցով:

Աշխատողների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$W = (n \times N + n_1 \times N_1) \times T$$

Որտեղ՝ n - տեխնիկական աշխատողների և ծառայողների թիվն է, 15 հոգի,

N - ջրածախսի նորման՝ - 0.016մ³,

N_1 – բանվորների և մեքենավարների թիվն է, 45 հոգի

N_1 - ջրածախսի նորման բանվորների համար՝ - 0.025մ³/մարդ օր<

T – շինարարության ժամանակամիջոցի օրերի թիվը՝ 520 օր:

Այսպիսով՝ $W = (15 \times 0.016 + 45 \times 0.025) \times 520 = 709.8$ մ³/շին.ժամ, միջին օրեկան 1.365մ³:

Արտադրական նպատակներով ջրի ծախսը պայմանավորված փոշեառաջացման օջախների ջրմամբ:

Այդ ծախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$V_1 = S \times K \times T \times K_1,$$

Որտեղ՝ S - թրջվող մակերեսն է, երկու կամ երեք տեղամասերում, ընդամենը՝ 400 մ²,

K - ջրցաման նորման – 0.0015մ³/1մ²

T – ջրցանի /չոր եղանակի/ օրերը շին.ժամ., 280 օր

K_1 – ջրցանի օրական քանակը, 2

Այսպիսով՝ $V_1 = 400 \times 0.0015 \times 280 \times 2 = 336.0$ մ³/շին.ժամ.:

Միջին օրեկանը կազմում է 1.2 մ³:

Ջրահեռացում

Ջրցանը դասվում է անվերադարձ ջրօգտագործման շարքին և արտահոսք չի առաջանում:

Կենցաղային կեղտաջրերի ծավալը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$V_1 \times (1 - L)$, որտեղ L – կորստի գործակիցն է, ընդունվում է 5% (0.05)

$709.8 \times (1 - 0.05) = 674.3$ մ³, միջին օրեկան՝ 1.3 մ³:

Շինարարությունը իրականացնող անձնակազմը օգտվելու է ժամանակավոր տնակներից, որոնք կտեղադրվեն մինչև շինարարական աշխատանքների սկիզբը և կմիացվեն տարածքում առկա ջրագծին և կոյուղուն:

4.1.4. Հողածածկ

Մանկապարտեզի տարածքում առկա են մի քանի փոքր հողակտորներ ազատ հողածածկով: Աշխատանքների կազմակերպման ժամանակ դրանց վրա նախատեսված է

տեղադրել երեք հատ ժամանակավոր տնակներ, որոնք աշխատանքներից հետո կապամոնտաժվեն և դուրս կբերվեն մանկապարտեզի տարածքից:

Ինչպես նշվել է սույն հայտի նախորդ բաժիններում, մանկապարտեզի տարածքում կան կանաչ գոտիներ: Այդ գոտիներով անցնում են ջրամատակարարման և կոյուղու խողովակներ, որոնց վերանորոգման/փոխարինման աշխատանքների ժամանակ կարիք կլինի հանել արտաքին հողածածկը, որի արդյունքում մասնակիորեն կվնասվի բերրի հողաշերտը: Հանվող հողաշերտի ծավալը կարող է տատանվել 5 – 6 մ³ սահմաններում և հողաշերտը անմիջապես ետ կլցվի:

4.1.5. Կենսաբազմազանություն

Ջրամատակարարման և կոյուղու խողովակների վերանորոգման/փոխարինման աշխատանքների ժամանակ կարիք կլինի հանել արտաքին հողի շերտը, որի արդյունքում կվնասվի այդ հատվածի խտածածկը և կհատվեն 3 – 4 թուփ:

4.2. Բնապահպանական միջոցառումներ

Շրջակա տարածքների և գործունեության ազդեցության ենթակա մոտակա բնակչության վրա բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված են շինարարական աշխատանքների իրականացմամբ և կրում են ժամանակավոր բնույթ: Այդ ազդեցությունները կարող են կանխվել կամ նվազեցվել բնապահպանական կառավարման պլանով (ԲԿՊ) նախատեսված՝ սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների և բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացման արդյունքում, որին պարտավոր են հետևել՝ շինարարը, հսկող և վերահսկող մարմինները:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա տարածքների և սոցիալական միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությանների կանխման, կամ մեղմացման միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների ներկայացվում են ստորև:

4.2.1. Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- Շինարարական աշխատանքների /փոշեռառաջացման աշխատանքներ/ ընթացքում իրականացնել ջրցան,

- Սորուն նյութերի ժամանակավոր կուտակումները և շինհրապարակը ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ կանխարգելելու համար փոշու տարածումը,

- Պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում:
- Գրունտի և սորուն նյութերի տեղափոխումն իրականացնել ծածկված թափքերով բեռնատարներով:
- Խուսափել անորակ վառելիքի օգտագործումից:

4.2.2. Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- Ջրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- Տարածքի հոսքաջրերը միավորել մեկ բակային ցանցում և միացնել գոյություն ունեցող հեղեղատար ցանցին:

4.2.3. Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով անհրաժեշտ է՝

- Շինարարական նյութերի ժամանակավոր պահեստները տեղադրել բետոնապատ մակերեսի վրա, որտեղ ապահովված կլինի հոսակորուստների հավաքման համակարգով,
- Աշխատանքների ավարտից հետո տարածքը բարեկարգել, վերականգնել և մաքրել՝ առաջացած թափոնները տեղափոխելով Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր:

Շինարարական և կենցաղային աղբով շրջակա տարածքների աղտոտումը բացառելու նպատակով նախատեսվում է՝

- Շինհրապարակում բացառել թափոնների ժամանակավոր կուտակումները,
- Թափոնները ժամանակին տեղափոխել հատկացված վայրեր՝ Երևանի քաղաքապետարանի համապատասխան կազմակերպության հետ նախապես կնքված պայմանագրերի համաձայն,
- Եթե առաջանան վտանգավոր թափոններ, դրանց հանձնում ընկերությունների, որոնք ունեն վտանգավոր թափոնների վնասազերծման, կամ տեղակայման լիցենզիա,
- Շինանյութերի ձեռք բերում միայն լիցենզավորված մատակարարներից:

4.2.4. Աղմուկ

- Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝
- Շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- Պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- Խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից, անհրաժեշտության դեպքում խլացուցիչների տեղադրում
- Հնարավորության դեպքում սահմանափակել միաժամանակ աշխատող ծանր տեխնիկայի /բուլդոզեր, էքսկավատոր/ շահագործումից:

4.2.5. Կենսաբազմազանություն

- Բուսատեսակների վրա հնարավոր ազդեցությունների կանխման, կամ մեղմման համար կարևոր միջոցառում է կոյուղու և ջրագծի վերակառուցման աշխատանքների ժամանակ հանված բուսահողի պահպանությունը և հնարավոր կարճ ժամկետում նույն հատվածում փռումը,
- Տարածքում առկա 25 - 30 ծառերի մեծ մասը գտնվում են այնպիսի տեղամասերում, որ դրանք հնարավոր է պահպանել, մնացածը հնարավորության դեպքում տեղափոխել մոտակա կանաչ տարածք վերատնկելու համար: Վերատնկումը կատարել համապատասխան մասնագետների հետ համաձայնեցված,
- Բացառել շինարարական աղբի և հողերի կուտակումները պահեստավորումը բուսածածկ տարածքներում:

Ճանապարհների խաթարման և ծանրաբեռնվածության հետևանքով քնակչությանը պատճառված անհանգստությունը մեղմելու նպատակով նախատեսվում է՝

- Շինարարական հրապարակում բեռնատար մեքենաների ժամանակավոր կայանման համար տարածքների տրամադրում,
- շինարարական մեքենա-սարքավորումների տեղաշարժի կազմակերպում շարասյուներով և սահմանափակ արագությամբ (≤ 30 կմ/ժ), ինչպես նաև մեքենաների իրար հաջորդող տեղաշարժի կազմակերպում՝ առնվազն 30 րոպե պարբերականությամբ,
- Շինհրապարակում խուսափում շինարարական ու կենցաղային աղբի այրումից և կուտակումից,

- Շինարարական աշխատանքների վերաբերյալ մոտակա բնակչությանը իրազեկում, որոնց արդյունքում կարող են ավելանալ փոշու քանակները, աղմուկի մակարդակը և ժամանակավորապես փակվեն ճանապարհները,
- Ցուցանակների տեղադրում, ինչպես նաև ժամանակավոր անցումների նախատեսում՝ որպես այլընտրանքային ճանապարհներ:

4.2.6. Սոցիալական մեղմող միջոցառումներ

Շինարարության փուլում հնարավոր սոցիալական ազդեցություններից խուսափելու նպատակով նախատեսվում է՝

- Թույլ չտալ շինարարական աշխատանքների կատարումը սահմանված ժամերից դուրս.
- Շինհրապարակը ցանկապատել և վերահսկել՝ կանխելու համար չլիազորված անձանց մուտքը շինհրապարակ,
- Վտանգավոր տեղամասերում տեղադրել նախազգուշացնող նշաններ,
- Որակավորված աշխատակիցների միջոցով իրականացնել սարքավորումների պարբերական զննումներ
- Շինարարների համար՝ անվտանգության աուդիտների, առաջին օգնության և անվտանգության դասընթացների պարբերաբար կազմակերպելում և իրականացում:

4.2.7. Թափոնների կառավարում

Մանկապարտեզի հիմնանորոգման ընթացքում կառաջանա շինարարական աղբ՝ գոյություն ունեցող շինությունների և կոնստրուկցիաների քանդման արդյունքում, որի ծավալը ըստ նախագծային փաստաթղթերի կանխատեսվում՝ 1121.5 մ³,

Այս թափոնատեսակը համաձայն ՀՀ բնապահպանության /ներկայում՝ շրջակա միջավայրի/ նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի N 430-Ն հրամանի հավելվածի՝ “Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի” համապատասխանում է “Պատի բետոնի իրեր, սյուներ, փչացած և աղտոտված բետոնային սալիկ” թափոնատեսակին, ծածկագիրը՝ 39901200 01 00 4, դասը՝ IV:

Այս թափոնների կտեղափոխվեն Սիլիկյան թաղամասի հատուկ աղբավայր, նախապես ստանալով Երևանի քաղաքապետարանի թույլտվությունը:

4.2.8. Աշխատանքի անվտանգություն և առողջություն

Մինչև աշխատանքների սկիզբը շինարարական աշխատանքները իրականացնող կապալառուն պետք է մշակի և ՀՀ ԱԻՆ համապատասխան ստորաբաժանման հետ

համաձայնեցնի «Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան»-ը: Պլանում անհրաժեշտ է ներառնել հետևյալ միջոցառումները.

- անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ, տեղատարափ անձրևներ) մասին հաղորդագրություն ստանալուց հետո կատարվող գործողությունների (միջոցառումների) ծրագիր,

- հակահրդեհային անվտանգության հետ կապված միջոցառումների ծրագիր,

- շինարարական աշխատանքների ժամանակ՝

- մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

- հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

- շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ:

4.3. Փոխհատուցում

Ինչպես նախորդ ենթակետերում նշվել է, բնապահպանական միջոցառումների նպատակն է նվազեցնել գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և վերականգնել բոլոր այն տեղամասերի նախնական վիճակը, որոնք կենթարկվեն գործունեության ազդեցության:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո որպես կարևոր միջոցառումներ նախատեսվում է՝

- Բոլոր մակերեսներն այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնել մինչև սկզբնական վիճակը
- Ամբողջ շին աղբը, նյութերի մնացորդները և սարքավորումները հեռացնել շինհրապարակից,

- Թփերի և ծառերի վերատնկման վայրը նախապատրաստել և ապահովել 90% կաչողականությունը:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Ռիսկերի նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում և կազմակերպել իրականացվող աշխատանքների մոնիթորինգ:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիտորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով շինարարության կապալառուի կողմից կիրականացվի կանոնավոր մոնիթորինգ, որի շրջանակներում նախագծային կազմակերպության բնապահպանության մասնագետի կողմից՝ յուրաքանչյուր փուլի մասով, կիրականացվեն մոնիթորինգի ստուգայցեր՝ երկու շաբաթը մեկ անգամ (երկու անգամ մեկ ամսվա ընթացքում): Արդյունքները գրանցվելու են մոնիտորինգի ստուգաթերթիկում:

ԲԿՊ-ն, որը ներկայացված է հավելված 1-ում, ընդգրկվելու է ծավալաթերթերում և որպես անբաժանելի բաղադրամաս կցվելու է պայմանագրային փաստաթղթերին:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆՐԻ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Իրականացման վայրը	Ժամանակամիջոց	Մոնիթորինգի միջոցառում	Մոնիթորինգի պատասխանատու
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Փաստաթղթերի ստուգում	ԵԿՆԾԻԳ, տեխնիկական վերահսկող /ճարտարագետ/
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվաճառության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում 	<ul style="list-style-type: none"> - Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ 	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Տեխնիկական վերահսկող /ճարտարագետ/
Շինարարական տեխնիկայի շահագործում	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի վնասումները պետք է կատարվի շինհրապարակից դուրս Երևան քաղաքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում 	<p>Մասնագիտացված սպասարկման կետեր</p> <p>Բենդալցակայաններ</p>	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Տարածքի զննում	Կապալառուի վերահսկող
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը պահեստավորում են թույլատրված վայրում	Շինհրապարակ	Հողային աշխատանքների ընթացքում	Գործընթացների ստուգում, տարածքի զննում	Կապալառուի վերահսկող

	- Անհրաժեշտության դեպքում ետլիցք, ավելցուկի օգտագործում տարածքի բարեկարգման նպատակով - հողային զանգվածի ջրցան				
Քանդման և շինարարական աշխատանքներ	Քանդված կոնստրուկցիաները, իրերը և այլ շինարարական աղբը կուտակել մանկապարտեզի մուտքի մոտ և պարբերաբար տեղափոխել Սիլիկյան թաղամասի աղբավայր	Մանկապարտեզի տարածք	Քանդման և շինարարական աշխատանքների ամբողջ ընթացքում	Մանկապարտեզի տարածքի պարբերաբար զննում	ԵԿՆԾԻԳ, տեխնիկական վերահսկող /ճարտարագետ/
Ջրամատակարարման և կոյուղու խողովակների վերանորոգում/ փոխարինում	Վերանորոգման/ փոխարինման աշխատանքները իրականացնել առանձին, ոչ մեծ հատվածներով, որպիսի ապահովվի հանված բուսահողի պահեստավորումը անմիջապես խրամատի մոտ և ետլիցք մեկ օրվա ընթացքում	Կանաչ գոտիների տարածքներ	Ջրագծերի և կոյուղու վերանորոգման/ փոխարինման աշխատանքներ ընթացքում	Արտաքին զննում	Կապալառուի վերահսկող
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - Երևանի քաղաքապետարանի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Շինարարության ողջ ընթացքում	Արտաքին զննում	ԵԿՆԾԻԳ, տեխնիկական վերահսկող /ճարտարագետ/
Շինարարական հրապարակի բարեկարգում	Շինարարական հրապարակի ժամանակավոր տնակների ապամոնտաժում և տեղանքի բարեկարգում - Շինհրապարակի վերջնական մաքրում, տարածքի բարեկարգում ու	Շինարարական հրապարակ, ժամանակավոր տնակներ	Շինարարության ավարտից հետո	Ստուգման գործընթացներ	ԵԿՆԾԻԳ, տեխնիկական վերահսկող /ճարտարագետ/

	կանաչապատում տեղանքին բնորոշ ծառատեսակներով				
Աշխատանքի անվտանգություն	<ul style="list-style-type: none"> - Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն - Հակահրդեհային միջոցառումների իրականացում 	Շինհրապարակ	Շինարարության ողջ ընթացքում	Ստուգման գործընթացներ	ԵԿՆԾԻԳ, տեխնիկական վերահսկող /ճարտարագետ/

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- ՀՀ Օրենք «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», 2014 թ. Հունիսի 21:
- Շինարարական Կլիմայաբանություն 2011: ՀՀՇՆ II 7.01-2011 ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. Սեպտեմբերի 26-ի N167-Ն հրաման:
- ՀՀ Կառավարության որոշում N 1325-Ն «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին», 19 նոյեմբերի 2014 թ.:
- [Www.arlis.am](http://www.arlis.am)
- [Www.atdf.am](http://www.atdf.am)
- ՀՀ կառավարության N 862-Ա որոշում: Անհատույց սեփականության իրավունքով գույք հանձնելու և քանդման (ապամոնտաժման) աշխատանքներ կազմակերպելու մասին: 25 օգոստոս 2016, URL: <https://www.e-gov.am/gov-decrees/item/27593/>:
- ՀԲ 2015: Բնապահպանական և սոցիալական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
- ՀՀ ազգային առլաս

ՆԱՅԱՍԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն



ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
(ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ) ԻՐԱՎՈՒՆՔԻ
ԳՐԱՆՅՄԱՆ

ZUSULUQHO

ZUSULUQHO ZON VEZE QF JSU

POSLEBNIH KOMPANENT RAZUMESURUJA

12 UNY



UT: 500

YUSURNQ

[Signature]
U. ZUSURNQ

FUSAH
QES

[Signature]
U. FUSAH QES

QELUQUR




U. FUSAH QES

ՀԱՏԱԿԱԿԻՈ

Հարկի չոփ արժեքի և 45%

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ԿՐԵՄԻՆՏԻ ՔԱՂԱՊԵՏԱՐԱՆ

ՔԿՈՒՂ



ԱՄ 4:500


ՀԱՏԱՐՈՂ Ջրի ՔԱՅԻՒ Վ. ՔԱՅԱՐԱՎԱՅԱՆ

ՔԵԼԱԿԱՆ



ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻՃ

1:200
(ՍԱՍՆՆՈՒՄ)



1	Պահպանվող տեղ
2	Ն. Պ. Ն. Ն. Ն.

1-2	15.5	Ն. Պ. Ն. Ն.
2-3	13.3	Ն. Պ. Ն. Ն.
3-4	13.0	Ն. Պ. Ն. Ն.
4-5	10.4	Ն. Պ. Ն. Ն.
5-6	11.0	Ն. Պ. Ն. Ն.
6-1	12.7	Ն. Պ. Ն. Ն.

Ն. Պ. Ն. Ն.

Կատարող *Ն. Պ. Ն. Ն.*
(ստորագրություն)

ՀՈՂԱՄԱՍԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

20 420,4

ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ 01-005
 ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ բժշկական կենտրոն
 ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ Շեքոյի զբոսայգուց և այլ համայնք
 ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱԾԸ (հա) 0,62528 (հ2)
 ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ համայնքի տարածքում

ՇԵՆՔԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ 01-005
 ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ համայնքի տարածքում
 ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ Շամկույնի համայնք
 ՄԱԿԵՐԵՍԸ (քառ. մ.) 4179,3
 ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ համայնքի տարածքում

ՇԻՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Գ/Գ	ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ	ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ	ՄԱԿԵՐԵՍԸ (քառ. մ.)	ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ
1.	01-005	Ե. ԵՆՔԱՅԻՆ	75,0	համայնքի տարածքում

Լրացուցիչ նշումներ, փոփոխություններ Գրքի զբոսայգուց և այլ համայնքի տարածքում
22 զբոսայգուց 39 հա. 40 կա.

(A3) Օգտագործող - Երևանի հ Գ 1 նախագաղափարային ուսումնական համայնքային կենտրոն >> Կ.Ղ.Զ.Գ.

(հ1) (հ2) ուղղանկյուն և (հ3) սեղանաձև համայնքային 5 տեղ կառուցելու նկատմամբ

Ղեկավար - Գ. Օհանյան

Կատարողներ Յ. Զեփյան
 (ստորագրությունները)

Կ. Զեփյան

ԿԿԱՅԱԿԱՆՆԸ ՏՐԿԱԾ Է ԱԼԵԿՍԱՆԴ ՍՊՆՆԵՐ ԻՐԱՎՈՒՆԵՐՈՎ

սեփականության (օգտագործման)

Ֆրանսիական հանրապետություն
(սեփականատիրոջ (օգտագործողի) անունը (անվանումը))

(հ.՛) Երևան Կապույտ փողոց

Ք. Երևան Երևանու համ. Գրք.-Նիքոզ Լույ. 45^ա քաղ. 200
(անշարժ գույքի գտնվելու վայրը (իասցեն), անվանումը) Սահմանափակված

ՆԿԱՏԱՍԱՐ

ՀՀ Երևան քաղաքում 13.03.97թ. ՔՊՀ 42 քաղ. 200
(անշարժ գույքի ձեռքբերման իրավունքը հաստատող փաստաթղթի անվանումը)

ՀԻՍԱՆ ԿՐԱ

ԳՐԱՆՑԿԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ, ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՍԱՐ
ԻՐԱՎՈՒՆԵՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ
Չ-Ց-1 ՄԱՏՅԱՆԻ 078 ՀԱՄԱՐԻ ՏԱԿ:

ՍՈՒՅՆ ԿԿԱՅԱԿԱՆԸ ԿԱԶՄԿԱԾ Է ԵՐԿՈՒ ՕՐԻՆԱԿԻՑ. ՄԵԿԸ ՏՐԿՈՒՄ Է ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԸ
(ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻՆ), ՄՅՈՒՄԸ ՊԱՅՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՈՒՄ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ



Ա. Բաբայան
(ստորագրությունը)

05 _____ 2002 թ.

671270

Վկայականի համարը



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒԹՅԱՆ ԿՈԴԵՔՍԻՏՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԶՆԱԿԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱՂԻՆՔ)

N 01/18-07/2- 107524 -1040 « 04 » 11 2020թ.

Օբյեկտ Երևանի հ. 71 մանկապարտեզի շենքի սեյսմազինվածության բարձրացման և հիմնանորոգման
(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, վերանորոգում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)
«Աշխատանքային նախագիծ» (բարձր ռիսկայնության օբյեկտ՝ IV կատեգորիա) նախագծային փաստաթղթերի մշակման համար
(նախորդ բնորոշումը, հզորությունը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)
Գտնվելու վայրը Երեւանի վարչական շրջան, Նոր Արեւ 2 փողոց հ. 45ա
(վարչական շրջանը, փողոցը, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)
Կառուցապատող Երևան համայնք՝ քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչություն, / օգտագործող՝
Երևանի հ. 71 մանկապարտեզ ՀՈԱԿ /
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)
Առաջարկարարի տրամադրման հիմքը Կառուցապատողի՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետ՝
Գ. Հարությունյանի հայտը, Երևանի քաղաքապետի 12.10.2020թ. հ.3158-Ա որոշումը, Երևանի քաղաքապետի կողմից
29.05.2018թ. տրամադրված հ. 01/18-07/2-36359-378 նախագծման թույլտվությունը, «Սեյսմիկ պաշտպանության
տարածքային ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից 16.04.2018թ. տրված մասնագիտական եզրակացությունը, անշարժ գույքի
նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.15062016-01-0193 վկայականը, նախատեսվող աշխատանքների
տեխնիկական բնութագիրը:
(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման,
անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթեր)

Առաջարկարարի գործողության ժամկետը Երկու տարի:
(ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N1 հավելվածի 31-րդ կետին համապատասխան)

Ն Ա Մ Ա Գ Ծ Վ Ո Ղ Հ Ո Ղ Մ Ս Ս Մ Ի Բ Ն Ո Ւ Թ Ա Գ Ի Ր Ը
(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)
1. Հողամասը գտնվում է Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական
կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ անհատույց օգտագործում, կադաստրային ծածկագիրը՝ 01-005-
0252-0062

(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը 0.62528 հա
(հողամասի սահմանները կորդինատային նշանարմամբ, մակերեսը, (հա))

3. Հողամասի առկա վիճակը 4179.3 քմ մակերեսով մանկապարտեզ, 58.1 քմ մակերեսով ներակայան
(տեղիի բնութագրող, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը,
հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները Նոր Արեւ 2 փողոց
(նախապահների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մուտքումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, էլեկտրամատակարարման, Նախագծվող և կից տարածքներով անցնող ինժեներական գծեր և
կոտլուց, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, հարորդակցողները:
(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ներկայացվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր Ճանապարհ:
(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված պլանային)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) Առկա չէ:
(ուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ Չկան:
(տեղամասի գործող արտարական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ներկայացվածքների
և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

Ն Ա Մ Ա Գ Ծ Վ Ո Ղ Հ Ո Ղ Մ Ս Ս Մ Ի Բ Ն Ո Ւ Թ Ա Գ Ի Ր Ը
(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետատակագծային պահանջներ Մշակել Նոր Արեւ 2 փողոց հ. 45ա հասցեում գտնվող հ.71 մանկապարտեզի շենքի
սեյսմազինվածության բարձրացման և հիմնանորոգման աշխատանքային նախագիծ՝
անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.15062016-01-0193 վկայականով ամրագրված
հողատարածքի սահմաններում:
(եղանակով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվադատական փաստաթղթերի պահանջներից,
առկա բաղադրական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում կազմավորված
(կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ձևավորմանը մատչելի, արտաքին
դրույթների, պատմաճանաչողության և գոյախի (ուժույթների վերաբերյալ)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) -----

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) -----

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)՝ Պահպանել առկա մասնաշենքերի հարկայնությունը:
(սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀԸ ՈՒ-6.02-2006
«Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման կոմիտե»
շինարարական կոմիտեով սահմանված պահանջների պակասով (հատուկ հաշվարկային մեթոդներ, սնյանակայունության
բարձրացման միջոցառումներ և այլն))

9.4. կառուցապատման խտության գործակիցը -----
(կառուցի (կառույցների) բնօրինակը մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

9.5. կառուցապատման տոկոսը -----
(կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)

9.6. կամաչապատման տոկոսը -----
(կամաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)

9.7. այլ պահանջներ

- Նախագծով նախատեսել մակնայարտեզի մասնաշենքերի շենքի սեյսմահիվանդության աստիճանի և էներգաարդյունավետության բարձրացում, հիմնախորհրդան աշխատանքների իրականացում և այլն:
- Նախագծի կոնստրուկտորական մասը մշակել «Մեյսիկ պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից 16.04.2018թ. տրված մասնագիտական եզրակացության հանձնարարականների և պահանջների համաձայն:
- Հատակագծային լուծումները մշակել համաձայն պատվիրատուի առաջադրանքի՝ հաշվի առնելով եզրմաստիվային և տեխնոլոգիական պահանջները:

10. Հողամասում գտնվող շենքերի և շինությունների բանդման կամ տեղափոխման (սպանոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը

11. Մտորգնումյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրամատակարարում

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը

(համաձայն ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված էլեկտրոնային տվյալների)

12.5. բույլ հոսանքներ

12.6. արքահանություն

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում

Կազմակերպել տարածքի ջրահեռացում:

(տեխնիկական պայմանագրով, ցանկացած, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում

Կառուցապատումից ազատ տարածքը բարեկարգել և կանաչապատել, հեռավոր է նախատեսել զանկապատում և պարսպապատում:

(վանդաֆոտային պլանավորման վերաբերյալ պահանջներ, կանաչապատում, ճարտարապետական փորք ձևեր, ցանկապատում, գոլազղ և այլն)

15. Շինարարական նյութեր

(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դեմերի, պատումների վերաբերյալ)

16. Պաշտպանական կառուցվածքներ

Նախատեսել արտակարգ իրավիճակներում պաշտպանության միջոցառումներ:

(արտակարգ իրավիճակներում ճարտարապետական օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ

Նախատեսել հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցներ:

(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և քնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ

Նախատեսել հաշմանդամների և FՄՆ-երի կենսագործունեության ապահովման ուղղված միջոցառումներ՝ նախագծումը (սարքավորման և կահավորման ընտրությունը) կատարելով ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՄՆ 3.02-05-2003) «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժ խմբերի համար» շինարարական նորմատիվ փաստաթղթերի պահանջների համապատասխան:

19. Երջակա միջավայրի պահպանում

(շրջակա միջավայրը վնասվող ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում

Մշակել շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծ՝ նկատի ունենալով ՀՀ կառավարության 12.04.2001թ. հ.286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «ԺԲ» ենթակետի և 44.1 կետի պահանջները, ինչպես նաև՝ Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. հ.405-Ն որոշմամբ սահմանված լրացուցիչ պայմանները:

21. Առաջարկների գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

Երկու տարի:

(Նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

Լ Դ Ա Յ Ո Ւ Ց Ի Ց Ի Չ Պ Ա Յ Մ Ա Ն Լ Ե Դ Ը

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված N 2-ի համաձայն՝ պետական համալիր փորձաքննություն (նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննությունը)

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ ճանաչողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

(իրավատու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ Երիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումներ

• Համաձայնեցում Երևանի քաղաքապետի հետ:

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օբյեկտով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահպանման տեղադրում

27. Այլ պայմաններ

Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարության առջին քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 19.07.2017թ. «Բնակելի, նստավայրական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները և ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ. հ.273-Ն որոշման ուժը կորցրած ձևով նախն. հ.128-Ն հրամանով հաստատված դրույթներին:

/Սույն նախագծման թղթավորությունը տրամադրվում է ի փոփոխություն 29.03.2018թ. փաստաթղթում և 01/ԵՊ/2-36359-378 նախագծման թղթավորության/

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Վ.Տ.

Հ.ՄԱՐԴԻԹՅԱՆ

Կատ. Լ.Ք
Բանալի՝ 1887864

